հպարտացեալ հայհոյեաց զնա 'ի դուռն Դրուսաղէմի. անդ կրծանեցան զաւրք նորա, և ինքն յորդւոց իւրոց սպանաւ առաջի կըռոցն իւրոց: Յորմէ իմանամք որ զի թէպէտ և բարեպաշտքն նոմաւ Թագաւորեալք, այլ ոչ եթէ ամբարիշտքն, ընդ դէմ և հակառակ նմա իբր թէ ինքեանց զաւրութեամբ յայն վիճակ էաք և բռնացեալ. այլ 'ի նորին Թագաւորելոյ վասն իւրեք անաւրէնութեան: Դէ այսպէս ամենայն Թագաւորութիւն և նահապետութիւն որպէս յերկինս, սոյնպէս և յերկրի 'ի նմանէ է և անուանի, ըստ ձայնին Պաւղոսի այլև Սողոմոնի որ ասէ, «Լուարուք Թագաւորք, զի 'ի Տեառնէ տուաւ ձեզ Թագաւորութիւնդ, և հարստութիւնդ 'ի Բարձրելոյն»: Դէ նոյն ինքն իմաստութիւն Հաւրն Աբրիատոս ասաց յառաջաւոր բանն Սողոմոնի, թէ «ինձ Թագաւորք Թագաւորեն, և բռունք ինձ ունին զերկիր»: Ելդ այսոքիկ առ այն բաւական լիցին, թէ յորմէ հետէ և զի արդ սկսաւ Թագաւորութիւն 'ի մարդիկ:

ԳՈՐԾ ԹԱԳԱՒՈՐԻ Մնաց սյսու հետև ասել, զկարգ և զկենցաղավարութիւն, և զգործ, և զերաւունս Թագաւորի: Ո՛ի որպէս ամենայն հասակի և կարգի զարաւշաձագոյն խրատս՝ անենախանձ և առատաբար ընծայեն զիրք Աստուածաշունչք, այսպէս և Թագաւորաց, և հս առաւել քան զայլոցն ըստ նախադասութեան պատուոյն և սահմանին մատուցանեն խրատս և սահմանս կենցաղավարութեան. քաջ դիտելով՝ զի բարութիւն նոցա բազմաց, և չարութիւն յոլովից հասանէ: Վասն որոյ պարտ և արժան է պատկառելի Թագաւորի, բարեպաշտութեամբ, խոնարհութեամբ, հեզութեամբ, իմաստութեամբ, առատութեամբ, արդարութեամբ, ճշմարտութեամբ:

(շարունակելի)

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ[1]

Առ Հերում թագաւորն գրեալ է յառեսարանին:

ՀԱՐՑՈՒՄՆ ՀԵԹՈՄՈՅ

Հարց. Ո՞վ ինչ ասաց Տէրն(2) ցայրն՝ որ ասաց "վարդապետ եկից և ես զկնիք քո", "ազվեսուց որջք զոն և թռչնոց երկնից զադարք":

Պատասխանի. Ասեն թէ Սիմոն կախարդն էր այրն՝ (որ) կամեցաւ 'ի պատճառս ապահովութեանն աշակերտիլ և ինչ ժողովել: Ասաց սրտագէտն, նենգաւոր աղուխուն որ է սատանայ, կայ տեղի 'ի քեզ, և թէ աւոր թռչնոց՝ որ են զեւք, հանդիսաս, և ինձ ոչ. զի ամբարտաւանելով ոչ գնաց ընդ այլ ժողով, զի հրամայեաց Տէրն:

Հ.— Ընդէ՞ր ասաց Տէրն ցորդիան Հերեթեայ սատանայով. "ոչ գիտէք թէ՝ որոյ ոգոյ է՛ք":

Պ.— Յորժամ երթայր Դրուսաղէմ Տէրն, առաքեաց զնոսա 'ի գիւղ մի պատրաստել վերակուր. և ոչ ընկալան զնոսա. ապա զայրացան և ասեն, "Տէր, կամիս զի ասասցուք և իջցէ հուր յերկնից և սատակեսցէ զնոսա":

---

(1) Ի ժամանակին ունիմք լիովին գլատմել զգործս Վարդանայ որպէս և Վահրամայ հոնդերձ կարեւոր ծանօթութեամբք «Պատմութեան մատենագրաց Հայոց»:

(2) Յօրինակին «ասացից Տէրն»:

Եւ Յիսուս ասասցուց նոցա և ասէ, "զայդ նախանձու հոգիդ Աստուծոյ է, որ հրով այրեաց և կոտորեաց զսուրբ մանկտարէսն, զի արժանի էին. ես եկի վասն մանկտան մեռանել". և զնոյն սիրտ և զհոգի տալ մեզ՝ մեռանել և կենդանանել զմարդիկ:

Հ.— Ընդէ՞ր 'ի գերեզմանսն բնակէր զիւահարն յերկիրն Գերգեսացւոց:

Պ.— Օ՛ղանդն զայն կամեցաւ հաստատել դևն, որ ասէ, թէ կարէն դիւռնակոչն հանել զմեռեալն կախարդութեամբ, որպէս զիւթն այն՝ որ եհան զՍամուէլ առ աչօք. և աղանդ մի այլ ասեն թէ՝ կախարդքն փողոտեն զանմեղ մանկունսն. և բռնամահ սպանանեն և զհոգիսն ընդ ինքեանս շրջեցուցանեն, որպէս Սիմոն կախարդն ասաց Պղեմ զիրքն:

Հ.— Օ՞ի՞նչ է, յորժամ ասացին փարիսեցիքն ընդ Տէրն, "զնա՝ ասասի զի Հերովդէս խնդրէ սպանանել զքեզ":

Պ.— Ասեն թէ, կամէր Հերովդէս նենգիւ որսալ զՏէրն և առաքել 'ի Հռոմ առ Կայսրն. վասն այն՝ ազուէս կոչէ զնա. զի զաղտ որսայ ազուէսն և նենգիւ: Եւ Տէրն կամեցաւ յայտնել և ասաց, "ես կամաւ կատարեմ զընթացս իմ յԵրուսաղէմ, և ոչ ընդունիմ և ոչ ապառաջոյ Երուսաղէմի մեռանիմ":

Հ.— Առակաւորք Պ՛ուկասու աւետարանն՝ ասեն ոմանք, թէ լեալ է. և կէսքն՝ թէ ոչ:

Պ.— Այրն մեծատուն՝ որ ազանէր բեհեզս և ծիրանիս. և Պ՛ազար առ դրանն, և նորա վերաւորեալ այս լեալ էր. և կայրն ազգականք նորա. վասն այնորիկ Տէրն ոչ ասաց զանունն. և թէ զեռրդ ('ի) դժոխս ոմանք 'ի հանդստեան կայրն, և նա 'ի տանջանսն, որպէս հոլովեց 'ի մէջ՝ դևն լեալ զոր, և այլքն 'ի հանդստեան են: Եւ թէ դժոխքն լինելոց է. այլ այս է հաւանականն՝ զայրս զայս մեծատուն զասաք ուրեք թէ Հերովդէս էր, այլ Աստուած գիտէր: Այն որ ասէ, "ազբ երկուս երեն 'ի առաջնոյն կալ յաղօթս". այս լեալ էր, զի ինքն սրտագէտ և աղօթից լաղ և արդարացուցիչ. փարիսեցին ասէր, "զանհեմ երկիրս 'ի շաբաթուն". շատ լինչ ասեն, այլ չորեքշաբաթի և ուրբաթի էր նման, և զեպք վասն նախատեղծիցն զլորման, զիարդ ազբն պահեին և ոչ հատարակ ժողովրդն:

Հ.— Օ՞ի՞նչ է առնուլ զհացն, Տէրն և ասաց, "առէք կերէք ամենեքեան". իսկ զբաժակն ոչ ասաց "առէք արբէք ամենեքեան", այլ թէ "արբէք" միայն, "այս է արիւն իմ":

Պ.— Բաժակն ոչ միայն 'ի խորհուրդ հաղորդութեան է, այլ և 'ի խորհուրդ մարտիրոսութեան, որպէս ասէր որդւոյն Զեբեդեայ, "կարէ՞ք ըմպել զբաժակն, զոր ես ըմպելոց եմ". զոր վասն մահուանն ասէր. արդ աւազանաւն որդիանալ, և 'ի մարմնոյ Տեառնն հաղորդիլ, հատարակ (է) ամենայն քրիստոնէից. իսկ մարտիրոսութիւնն ոչ է հատարակաց, այլ ըստ ժամանակին հանդիպման՝ քաջութեամբ համբերողացն:

Հ.— Օ՞ի՞նչ իցէ նոր ուխտն:

Պ.— Օ՛ի հին ուխտն արեամբ անբանից անասնոց էր, ուխտն, զարշն և երդում է կտակ՝ (որ)տ ի ա թ ի կ (1) զրեալ է: Մ՞ովսէս առեալ զարիւն և ասէ, արիւն կտակին զոր պատուիրեաց ձեզ Աստուած. այսինքն, թէ՝ այսու պաշտեցէք զՏէրն զոհիւք և պատարագօք, և զրիցէք՝ որ ոչ մոռանայք. և զի կենդանութեամբն Աստուծոյ եղաւ կտակն, և անբանից արեամբն նա չէկաց հաստատուն. իսկ ասա մեռաւ Տէրն կտակագիրն, հաստատուն է կտակս, զի արեամբ Աստուծոյ եղաւ. և միշտ նոր է

(1) Բառս այս Յունարէն է եւ Քարոզմանի կ տ ա կ:

և ոչ հնանայ Տէրն։ Ասեն ոմանք թէ Յովհաննէս զաւետարանն 'ի Պատմոս կղզոջն գրեաց։ Յետ երկոտասան ամի շարչարանաց Տեառն յանծանօթ ծոցոյն անհաս որոտալով 'ի վերուստ. և Պրոխորոն աշակերտն նորին ասէ, թէ՝ անդ գրեաց։ Իսկ Եւսեբի և այլք ասեն թէ Յովհաննես գրեաց. և մեք գոսք, որ երկոքեանն իրաւի են. զի գրեաց մասն ինչ 'ի վարդապետութենէ և 'ի նշանաց Տեառն. և զմահն և զյարութիւնն 'ի Պատմոս կղզին, և եթող նոցա. և յորժամ դարձաւ եկն Եփեսոս, և ցուցին զերիս աւետարանն և հաւանեցաւ և ասաց թէ, իրաւի է՝ զոր գրեալ են. բայց 'ի մատնութենէ Յովհաննու 'ի բանս, և նախ քան զմատնիլն Յովհաննու շատ ինչ եղեն զոր ոչ են գրեալ։ Այսպէս աղաչեցին զնա ընել զթերին, որ ցուցանէր զորդորդ գետն գրախտաբուղխ. և նա խոնարհեալ յաղաչանս նոցա, և առանձնացեալ գրեաց, "'ի սկզբանէ էր բանն և այլն". և ասեն մինչ սկսաւ գրել զսրովբէածածուկ Աստուածաբանութիւնն, արգելեալ եղև 'ի Հոգւոյն, թէ չկարեն տանել այսու կենաց և ժամանակաւ զայդպիսի թագուն և անճառ բան։ Իսկ նորա խոնարհեցուցեալ զբանն ասաց, "եղիւ այր մի առաքեալ յԱստուծոյ՝ անուն նորա Յովհաննէս", և յառաջ տարեալ զբանն ասէ, "զ Ջուրն գինի եղեալ յսկիզբն նշանացն". այլ զայս գիտեա, զի գինւոյն զոյնն ջուր երևէր, և փոխեցաւ բնութիւն ջրոյն. և համն և զոյնն ոչ փոխեցաւ, նշանակ մարդանալոյն Աստուծոյ. մարդն մնաց թանձրութեամբ և գունովն, բայց բնութիւնն Աստուածացաւ միանալովն ընդ աստուածութեան բնութեան. ոչ կորուսեալ այլ միաւորեալ. ուստ զինչ ասէ, "Բանն մարմին եղև" և մարմինն բան. և զայս ինքն ստուգէ ասելով, «ոչ ոք եկ յերկինս, եթէ ոչ որ էջն յերկնից՝ որդի մարդոյ՝ (որ) էն յերկինս»։

Հ.— Օ՞ի՞նչ է, որ ասէ, թէ "եղև խընդիր աշակերտացն Յովհաննու վասն սրբութեան"(1)։

Պ.— Հրեայ մի մկրտեալ էր 'ի Յովհաննու, և դարձեալ մկրտեցաւ յաշակերտացն Բրխոսոսի. և Յովհաննու աշակերտքն բարկացան և ասացին, թէ՝ ընդէ՞ր 'ի նոցանէ այլ մկրտեցար, մի՞թէ առաւել սրբեցար։ Սրբեցար 'ի յաշակերտացն Բրխոսոսի։ Եւ նա ասէ, այո։ Եւ նախատեցին։ Եւ Յովհաննէս բարկացաւ աշակերտացն, այլ յառաջ քան զեսին. և ոչ նոքա կարէին հոգի տալ, զի որդւոյ մահուամբն հաշտեցաւ։ Այն շնացեալ կիներն՝ զոր ոչ գրեցին յաւետարանն, զոր այլք քրիստոնեայք ունին իբրեանց յաւետարանն, այս է պատճառն. Պապիաս ոմն գրեաց որ աշակերտ էր Յովհաննու աւետարանն (աւետարանչին), որ յետոյ հերձուած խօսեցաւ և խոտեցաւ, Եւսեբի ասացեալ, բայց յետոյն գրեալ։ Այս լինի և ուրեք և այն բանն՝ զոր Պիղատոս գրեաց «Թագաւոր եմ Հրէից», և էր ասէ երբայեցերէն, և յունարէն գրով վարէին։ Այն՝ որ Պիղատոսի կնոջն երևեցաւ, և շարչարեաց, ասեն, թէ՝ դև էր և ոչ հրեշտակ. սակաւ մի կասկածեաց տատանայ 'ի կամաւ գալոյն 'ի խաչ՝ թէ աստուած է. և ջանայր խափանել. և հրեայքն ինքեանք դիւացեալք էին, աւելի յորդորիչ ոչ պիտէր. աւաղակն դաւանեաց զՏէրն՝ թագաւոր և արքայ, Դեմաս էր անունը, և որ յահեկ նորա՝ Կեստաս. որ հայհոյէրն՝ հրեայ էր ասեն. կարծեաց թէ՝ խնայեսցեն զենքն վասն հայհոյութեանն. և ասեն, թէ՝ բարեմիտ

(1) Յօրինակին ի լուսանցն գրեալ էր «երկու անդամ մկրտին Հրէի»։

ուաղաին՝ հեթանոս էր ազգաւ. յառաջին երկոքեանն հայհոյէին. ապա ծագեաց լոյս աստուածային 'ի սիրտ նորա, զի զոյր 'ի նմա մնան բարի. էր և այն սքանչելիք՝ որ յետոյ փոխեաց զբանն, որ չասէին հրեայքն թէ՝ աշակերտ էր նմա, և բանադրած՝ որ դաւանէր զնա Տէր: Որ ապրուակեաց զՏէրն՝ Մաղբոս էր անուն. որ եթէ ոչ՝ զբ որ ... որ զլեղին նա՝ Ռոքոս էր անուն: Ղունկիանոս հալիւրապետն խոցել նա զնոսրին, և կ արիւն և ջուր. և խնդրեաց զաչսն արիւնաթաթախ, և համբուրեաց. ասեն թէ՝ մի ակն կոյր էր. շփեաց յակն և ողջացաւ: Եւ այս է ասելն՝ թէ՝ «որ Նտեսն զկայեաց»: Սամարացոյն՝ յորմէ Տէրն ջուր խնդրեաց, Լուսինայ էր անուն յիշելով զանունն աչացաւի՝ աւեստարանական է: Տեռատեսին անունն Գոզինայ է: Ռանանու Հուոյն՝ որ 'ի փշրանաց մանկանցն խնդրեաց, Նրմնէ է անունն: Ղազիրն որ եհարց զՏէրն, Նիկոդիկոս անուն: Դշխոյն՝ որ եկն լսել զիմաստութիւն Սողոմոնի, Ոիսայ էր անուն: Ելբրինոյն անուն՝ Փոթամիոս՝ զոր Փիլիպպոս մկրտեաց, որ էր (յ) եօթեանցն՝ սարկաւագ: Բայց թէ՝ նելբինին ուսմն ունէր զՆատային. դշխոյն՝ որ եկն առ Սողոմոն, խնդրեաց դրեանս և տարաւ յաշխարհ իւր. և մարդիկ՝ որ կարդային զգիրս. այլ ասեն, թէ՝ 'ի նոցունց որդվոցն էր՝ ազգաւ հրեայ. փաստն այն եկեալ յԵրուսաղէմ երկրպագանէր պատկառելով յօրինացն՝ որպէս աշակերտ:

Ա.— Զի՞նչ է այն, որ ասէ, 'ի տեսիլ տրոյ ուսմանն՝ թէ 'ի վերայ վերապին գոչէ հրեշտակապետն զիւր յարութեան մերոյ (1):

Պ.— Դիոնեսիոս այսպէս ասացեալ է, թէ ամենայն ազգի հրեշտակապետք՝ զիւր յանձնեալ ազգն գոչէ ձայնիւ փողոյ: Այսպէս և Հայոց վերակացուն 'ի վերայ վերապին հնչեցեալ առ սուրբն Գրիգոր Հայաստանեացց, և նա ընդ իւր առեալ զՀօան՝ վերանայ ընդ առաջ Դրիսատոսի ասելով, թէ՝ «ահա ես և մանկունք իմ, զոր ետ ինձ Աստուած». զայս (՛ի) մեր Ս. տրդատպետն լուաք: Այսմ վկայ ասեմ քեզ, զոր լուաք 'ի գառնեցուցն Յովհաննիսի. թէ 'ի Թիւս Հայոց Օ.Ն՛.Հ.Ն-ն կայի 'ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, և գնացեալ էաք 'ի Յորդանան վասն ուսանելի յայտնութեան Տեառն. և մինչ կայի մեկուսի յաղօթս և եկն առ իս Ս ուրբ (1) մի՝ երկու որդովն, և խնդրեաց յինէն մկրտութիւն, թարգմանելով՝ միով ընդ իւր. և ասեմ ցնա ոչ ես գու, և զի՞նչ է պատճառն՝ որ մկրտիս և լինիս քրիստոնեայ. և ասէ ցիս, թէ զնա և զպատճառն իմ՝ կամիս հարցանել, նի՛ստ և ասեմ քեզ զպատճառն, և նստաք: (2) Եւ ասէ՝ ես 'ի Պարսից եմ. գաւառաւ (և) ազգաւ 'ի քաղաքէն որ կոչի Օ.ան կ.ան, և ունիմ զիւր ազգաքաղաքին և շատ միւք (3). նոյնպէս և 'ի քաղաքին շինեցի Ս ինարէ (4) մի, բարձր յոյժ. և 'ի վճարման գործոյն արարի կոչմունս մեծ և ժողովս, և արարի խրախութիւնս. և նախ քան զհայկերութիւնն հանին զիս 'ի Ս ինարէն ասել զառաջին ժամն մեր. և մինչ գնացի և շրջեի 'ի գլուխ Ս ինարէին, հայեցայ 'ի կողմն արևելից և տեսի բացեալ զերկինս, և իջանէր թագաւոր մի անճառելի՝

(1) Ի լուսանցն. «ամենն ազգի հրեշտակացն զիւր ազգն գոչէ»:

(1) Զատարան.

(2) Ի լուս. «Պարսիկին մինարէն եղանել եւ սէյան տալն եւ զՔրիստոս տեսանելն»:

(3) Կալուած:

(4) Աշտարակ մարթաց Պարսից եւ Օսմանցւոց. յորմէ հրաւիրեն զժողովուրդս իւրեանց յաղօթարան:

հրեղէն զօրաք. և եկեալ 'ի զօրացն հանդէպ իմ, կազմեցին աթոռս 'ի վերայ օդոյն, և եկեալ թագաւորն նստաւ. և հնչէին փող յամենայն կողմանց. և սկսան գալ ամենայն ազգ քրիստոնէիցն՝ առաջնորդաւն իւրեանց, և երկիրպագանէին. և թագաւորն ընդունէր և մեծարէր զամենեսեան՝ զլեռնէն. և անցեալ նստէին ամենեքեան: Ապա գայ ազգ մի օտար ի պայծառ լուսով փառաւորեալ, զարմանալի առաջնորդաւն: Եւ յարեաւ թագաւորն ընդ առաջ նորա, և զերկս արկեալ համբուրեաց զնա. և սկսաւ դողել և գոհանալ զնմանէ ասելով, իմ քաջ նահատակ, իմ զուարթ և արթուն և ժիր մշակ, և իմ մեծ և յաղթող սպառազէն, և նըստոյց զնա յաջմէ իւր. և զազգն նորա համբուրէր. և այսպէս հիացեալ և սքանչեալ կային: Իսկ բազմութիւն ժողովոյն որ 'ի վարն էին, զարմացան ընդ յամէլն իմ. և առաքեցին առ իս զառագ որդիս իմ. և նա եկեալ և զնոյն տեսին ետես, և յիմարեալ եկայ և սա. և նոքա յոյժ նեղասրտեալ առաքեցին զկրտսեր որդիս իմ՝ սահիպ մեզ զնալ առ նոսա. և յորժամ եկն ասայն՝ անց տեսին. սակայն մեք պատմեցաք սմա զերան. և ասացին ցիս որդեաս իմ, թէ զի՞նչ կամիս առնել. և ես ասացի, թէ ճանալ կամիմ զՔրիստոս Աստուած՝ թագաւոր փառաց՝ և պարծանք Քրիստոնէից: Եւ առաք որդիս իմ այն հայր, զոյդ ասան, զի սպասանիցին զմեզ և երթեալ խառնիմք 'ի զօրսն թագաւորին Քրիստոսի: Իսկ կրտսեր որդիս իմ ասաց, ոչ է արժան զայդ առնել, զի զմեզ և զամենայն ազգն մեր ջնջին. իսկ դուք ասացէք՝ թէ ամենայն ազգն չէր ('ի) մի պատիւ. այլ երթեալ դասնեմք զսիրելի ազգն, և զաւաջնորդն զայն առաքի, և խառնիմք յազգն յայն մկրտելով 'ի նոցանէ: Եւ մեր հաւանեալ ինքաք և տուաք զհայն ամբոխին. և երթեալ 'ի զիւղն մեր առաք Եւ՝ կարսիր, և երկր գրաստ, և ելաք 'ի զիշերին, և Աստուծոյ եկաք մեք առաս. և տեսաք նշան ինչ 'ի քեզ. զի յԱզգէն Հայոց ես, և էք դուք հաւատարիմ ծառայք թագաւորին Քրիստոսի, զոր տեսաք և մեք կամիմք լինել իրրև զձեզ: Եւ երեկ առաջի իմ զոսկին, և ես ոչ առի. և մկրտեցի զերեքեանն յանուն սուրբ Երրորդութեանն. և բերի յԵրուսաղէմ և հաղորդեցան 'ի սուրբ Լուսաւորչէն. և ասացին, զնամբ յայնկոյս Ծովուն մեծի 'ի պատճառս աղօթիցդ: Եւ այսպէս եղեալ շնորհօքն Քրիստոսի, զոր պատմեաց սուրբ Հայրն Յովհաննէս Գառնեցի:

ՏՕՆ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Եթէ Հայք այժմ ունին անցեալ փառաց և պարծանաց մշտատև և փառաւոր կոթող, զայն արժան է հաւատալ իւրեանց քրիստոսական սրբազան Կրօնքը և հաստատուն Եկեղեցին: Իսկ եթէ կան Կրօնից և Եկեղեցւոյ մէջ՝ Հայոց երկարժամանակեայ կսկիծը թեթևացնող, սիրաը մխիթարող և միանգամայն հոգեպարար ուրախութիւն ներշնչող պարագայներ, զայնս պէտք է կրօնական և Եկեղեցական վսեմ արարողութիւնքը և հանդէսքը խմռնալ, յորոց զբաղեալ առաջինը կը հանդիսանայ ,,Կաթողիկէ Եկեղեցւոյ Ս. Էջմիածնի տօնը,,:

Այս տօնը՝ որ Հայը նուիրական իմն սրբազան պարտաւորութիւն չդգայ պաշտել, ըստ որում կը ներկայացնէ նորա Ս. Եկեղեցւոյ վերանորոգութեան և առաւել պայծառ և